Հատուկ գիրքը

Ջուլիա Վիլարդսոն
(Հիմնված է իրական պատմության վրա)

«Կարդալու հերթը քոնն է, Պապա»,- ասում է Բերնիսը: Նա բացեց սուրբ գրությունները: Մաման և Պապան նստեցին նրա կողքին՝ բազմոցին:

Պապան կարդաց առաջին սուրբ գրությունը: «Ես գիտեմ, որ Նա սիրում է Իր զավակներին»:

«Ես գիտեմ, որ Նա սիրում է Իր զավակներին»,- կրկնեց Բերնիսը:

«Սակայն, - ասաց Պապան, - ես չգիտեմ բոլոր բաների իմաստը»:

Այնուամենայնիվ բառը դժվար խոսք էր Բերնիսի համար: Բերնիսը դեռ չէր կարողանում կարդալ, և նա չէր հասկանում, թե ինչ էին նշանակում բոլոր խոսքերը: Բայց նա սիրում էր կրկնել խոսքերը, երբ նրա ընտանիքը միասին կարդում էր սուրբ գրությունները:

Հաջորդ օրը՝ սուրբ գրության ժամին, Պապան անակնկալ ուներ: «Ես մի հատուկ բան ունեմ քեզ համար», - ասաց նա: Նա Բերնիսին մի գիրք տվեց: Գրքի կազմի վրա մարդկանց և նավակի մի նկար կար:

«Սա ինձ համա՞ր է»: Հարցրեց Բերնիսը: Նա իր գիրկն առավ այդ մեծ գիրքը:

«Քեզ համար է»,- ասաց Պապան: «Նայիր ներսը»:

Բերնիսը բացեց գիրքը: Նրա աչքերը մեծացան: Այնտեղ այնքան շատ գունավոր նկարներ կային:

«Ինչպե՞ս է այն կոչվում»: Հարցրեց Բերնիսը:

Պապան մատնացույց արեց կազմի վրա գրված խոսքերը: «*Մորմոնի Գրքի պատմվածքներ*»,- ասաց նա:

Բերնիսը հետևեց շապիկի խոսքերին: «Մորմոնի Գրքի պատմվածքներ»,- ասաց նա:

«Այն ունի նույն պատմվածքները, որոնք մենք կարդում ենք սուրբ գրություններում»,- ասաց Մաման:

Բերնիսը մատնացույց արեց նկարներից մեկը: «Ո՞վ է այդ»,- հացրեց նա:

«Հը՛մ: Տեսնո՞ւմ ես աղեղն ու նետերը»: Հարցրեց Մաման:

Բերնիսը գլխով արեց:

«Հիշո՞ւմ ես, որ կարդացինք մեկի մասին, ով կոտրված աղեղ ուներ»,- հարցրեց Պապան:

«Նեփի՞ն»,- ասաց Բերնիսը:

«Այո, դա Նեփին է»,- ասաց Պապան:

Բենիսը ժպտաց: «Շնորհակալություն, Պապա: Շնորհակալություն, Մամա: Ես սիրում եմ այս գիրքը»:

Ամեն գիշեր Բերնիսը կարդում էր իր գիրքը Մամայի և Պապայի հետ: Նա մատով ցույց էր տալիս նկարները: Նա սովորում էր ասել դժվար բառեր: Եվ ինքնուրույն սովորում էր կարդալ որոշ հեշտ բառեր:

Սուրբ գրությունների ընթերցանությունը երջանկության զգացում էր պարգևում նրան: Նա ուրախ էր, որ կարդում էր դրանք Մամայի ու Պապայի հետ: ●

Այս պատմությունը տեղի է ունեցել Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում:

1 Նեփի 11.17

ԱՄՈՒՍԵՐԸ՝ ՍՈՆՅ ՈԲԻՆՈՎԻՉ